

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-ԻՆ
ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. երևան
Մասնակցում էին՝**

խորհրդի անդամներ՝

S. Սարգսյան	ՀՀ վարչապետ (խորհրդի նախագահ)
Վ. Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահի տեղակալ)
Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Դ. Սարգսյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Ղարիբյան	ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական (համաձայնությամբ)
Ս. Գալստյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Մարտիրոսյան	«Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ռ. Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն
Է. Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Վարդանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)
Ժ. Ազիզյան	Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Վ. Սաֆարյան	«Հայրենական ապրանք արտադրողների միություն» ՀԿ-ի նախագահ, ՀՀ հանրային խորհրդի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)

Ա. Բաբայան	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հայաստանյան գրասենյակի ղեկավար (համաձայնությամբ)
Մ. Հերզնյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)
Գ. Գևորգյան	Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի նախագահ (համաձայնությամբ)
Ս. Զաքարյան	«Հայաստանի դեղարտադրողների և ներմուծողների միություն» ԻԱՄ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Գ. Կաֆշյան	«Երևանի ոսկերչական գործարան» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Տ. Հարությունյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)
Մ. Մանուկյան	«Նեյշնլ Ինստրումենտս Արմենիա» ընկերության պայմանագրերի ռեգիոնալ մենեջեր (համաձայնությամբ)
Ն. Հարությունյան	«Զեյ Սի Էյ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Ա. Զաքարյան	«Երևանի Արարատ Կոնյակի-Գինու-Օղու կոմբինատ» ԲԲԸ-ի կոմերցիոն տնօրեն (համաձայնությամբ)
Ս. Մաթևոսյան	«Լիկվոր» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)

Հրավիրվածներ՝

Ռ. Մակարյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Հ. Միրզոյան	Արդյունաբերության զարգացման հիմնադրամի տնօրեն
Ա. Եգանյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի արդյունաբերության քաղաքականության վարչության պետ

- Ա. Հարությունյան << կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
- Ա. Ուդումյան Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի նախագահի տեղակալ

1. Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության 2013-2020 թվականների ոլորտային ռազմավարությունների և դրանց իրականացումն ապահովող 2013-2015 թվականների գործողությունների ծրագրի քննարկում և հաստատում

(Տ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության 2013-2020 թվականների ոլորտային ռազմավարությունների և դրանց իրականացումն ապահովող 2013-2015 թվականների գործողությունների ծրագրի նախագծին՝ կատարելով համապատասխան փոփոխություններ հարկային օրենսդրությանը վերաբերող միջոցառումների մասով (հարկային հարցերի քննարկման և համապատասխան առաջարկությունների մշակման նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին)։

2) հանձնարարել << Էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ իր իսկ առաջարկությանը համապատասխան՝ Ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության 2013-2020 թվականների ոլորտային ռազմավարություններից բխող՝ հարկային արտոնությունների սահմանման հարցերը դարձնել համապատասխան աշխատանքային խմբի քննարկման առարկա։

2. Դեղագործության և բիոտեխնոլոգիաների, Կոնյակագործության, Գինեգործության 2012-2015 թվականների գործողությունների ծրագրում կատարված փոփոխությունների քննարկում և հաստատում

(Ռ. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Դեղագործության և բիոտեխնոլոգիաների, Կոնյակագործության, Գինեգործության 2012-2015 թվականների գործողությունների ծրագրում կատարված փոփոխությունները։

2) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ քննարկել Կոնյակագործության և գինեգործության 2012-2015 թվականների գործողությունների ծրագրի ներքո փոքր, միջին և խոշոր կոնյակագործներին ու գինեգործներին պետական աջակցության ձևաչափը, սկզբունքները և ըստ այդմ ներկայացնել առաջարկություն:

3) հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին՝ շահագրգիռ կողմերի հետ առանձին քննարկման առարկա դարձնել խաղողի ֆիլոքսերա հիվանդության հարցը և ներկայացնել խնդրի լուծման առաջարկներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՏԻԳՐԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ